

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՋՏՅԱՆՑԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՎԵՊԸ

(Գ. Սրվանձախանցի ծննդյան 150-ամյակի առթիվ)

Բաճախի գլխավոր զոհատուր Ս. Բ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ ժողովրդական մշակույթի պատմության համար կարևոր թվական եղավ 1874-ը, երբ Կոստանդնուպոլսում լույս տեսավ երիտասարդ վարդապետ Գարեգին Սրվանձախանցի ծավալուն խորագրով, բայց խիստ փոքրածավալ «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքուկը:

Այն, ի շարս Տարոնի և Վասպուրականի գավառների տեղագրական, ազգագրական նկարագրությունների և բանահյուսական մի քանի արժեքավոր նմուշների, իր մեջ էր ամփոփում ամենակարևորը՝ մեր ազգային հերոսավեպ «Սասնա ծռերի» անդրանիկ նորագյուտ պատումը: «Հայ մշակույթի դարավոր պատմության մեջ կատարված մեծագույն հայտնագործություններից մեկն էր դա,—գրում է ակադ. Ա. Ղանալանյանը,— որի համար մենք պարտական ենք Գ. Սրվանձախանցի <...> անձանձիր շանքերին»¹:

Հիրավի, մի մեծարդյուն գյուտ, որ պետք է շրջադարձային հանդիսանար հայ բանագիտության ու բանահավաքչության սկզբնավորման ու հետագա վերընթացի պատմության մեջ:

Բանն այն է, որ ընդամենը ժողովրդի ընդերքում «Սասնա ծռեր» հերոսավեպի հազարամյա գոյությունը, հայ գրագետ հասարակայնությունը մինչև Սրվանձախանցի այդ գրառումը անտեղյակ էր մնացել դրան: Իհարկե, մինչ այդ, Հայաստանի տեղագրությամբ զբաղվող առանձին անձինք (Ղուկաս Ինճիճյան և ուրիշներ) մի երկու տեղանվամբ առթիվ (Խանգութի բերդ, Խանգութի ձոր, Դավթի քարեր) լսել էին այդ վիպական անունների հետ կապված ինչ-որ ավանդություններ, բայց դրանց մասին նշվում է խիստ թուղթիկ ու անցողիկ, գրեթե առանց բովանդակության հիշատակման: Իսկ ամենազարմանալին, ինչպես պարզվեց մի քանի տասնամյակ առաջ, այն էր, որ տակավին ուշ միջնադարում մեր այդ վեպին ծանոթ էին եղել օտարերկրյա ճանապարհորդները (գատելով, հարկավ, մեզ հասած մատենագրական աղբյուրներից): XVII դարի կեսերին պորտուգալացի Անտոնիո Տենրեյրոն և Մեսթր Աֆոնսոն, տարբեր տարիների և միմյանցից սնկախ ճանապարհորդել էին Արևելքում, եղել Սասունում և երկուսն էլ տեղում լսել էին Դավթի վեպը և իրենց ուղեգրություններում խիստ արժեքավոր տեղեկություններ հաղորդել վեպի գործող անձանց և առանձին դրվագների մասին²: Ցավոք, այդ ամենին հայագիտությունը իրազեկ եղավ միայն 1960-ական թթ. կեսերին, այսինքն՝ Սրվանձախանցի հայտնագործությունից մոտ մեկ հարյուրամյակ անց, շնորհիվ սփյուռքահայ գիտնական Ռոպեր Կյուլպենկյանի բանավոր հաղորդումների ու գրավոր հրատարակումների:

Ինչևէ, վեպի անդրանիկ պատումը Սրվանձախանցը գրի է առել 1873 թ. հունիսին: Բայց, իր այն հավաստումը, թե «Դավիթ սասունցի կամ Մհերի դուռ վեպը <...> երեք տարի հետամուտ եղա ձեռք բերելու և ոչ ոք գտա որ ամբողջապես գիտե՞նար»³, վիպում է, որ նա, վեպի գրառումից դեռևս երեք տարի առաջ, այսինքն 1870 թ. է իմացել վեպի գոյության մասին, երեք

1 Գ. Սրվանձախանցի «Երկեր», Կ. Ի, Երևան, 1978, էջ 12:
2 ՏՆՍՈՒՆՆԵՐ. Վ. Կյուլպենկյան. Հայ-պորտուգալական հարաբերություններ. Երևան, 1986, էջ 231—245:
3 Գ. Սրվանձախանցի «Երկեր», Կ. Ի, էջ 84—85:

տարի գրադվել է վեպի ամբողջական պատումն իմացող վիպասացի որոնմամբ: Այդ որոնումները պատկավում են հաջողությամբ միայն 1873 թ. հունիսին, երբ Օհան վարդապետը (հավանաբար Մշտ) Սրվանձախանցին է ներկայացնում Մշտ Առնիսա գյուղացի երեսփոխան Կրպոյին: Վերջինս պատմում է, որ վեպը շատ լավ ու ընդարձակ իմացել է իր վարպետը, որ վեպում «սոցընդ մեջ շատ տեղեր ոտանավոր խաղեր կային, որ ձայնով կարելի էր ապա՝ իր այդ վարպետն ունեցել է երկու վոշիկ (իմա՝ ոչտունցի) աշակերտներ, որոնք շատ կատարյալ սորված էին» վեպը: Կրպոյն խոստովանում է նաև, որ «ինքն՝ բավական ժամանակ պատմած շինելով, շատ կտորները մոռացած էր»:

Այս ամենով հանդերձ Սրվանձախանցի ևրեք օր իր մոտ է պահում Կրպոյին, հյուրասիրում, պարգևներ տալիս, նախապատրաստում, պատմել տալիս վեպը, որը, իր խոսքերով ասած՝ «իրեն բարբառով ի դիր անցուցի»:

Սրվանձախանցի վերոբերյալ հակիրճ հաղորդումները արդեն նախնական գիտելիքներ էին ծանուցում նորահայտ վեպի արաբքին մի քանի հատկանիշների մասին: Առաջինն այն էր, որ վեպի նախնական տարրերակը, անկախ գրառված պատմից, եղել է խիստ ընդարձակ, բաղկացած է սոցընդ շախմատ շատ հատվածներից, որոնք կատարվել են երգելով: Սպա. այդ նույնական պատմի ասացողը եղել է վարպետ վիպասաց, ունեցել է անգամ երկու աշակերտներ, որոնք իրենց վարպետից շատ լավ սովորել են վեպը և պատմել: Եվ, վերջապես, գրառված տվյալ պատմի վիպասաց արդեն, վաղուց պատմած շինելով՝ արդեն շատ բան էր մոռացել վեպից:

Սրվանձախանցի այս նախնական հաղորդումները հաստատվել են հետագայում գրառված վեպի նորանոր պատումներով: Իսկապես, ևսեռն նախ վեպի մի շարք նոր, շատ ընդարձակ տարրերակներ, որոնց մի մասը, մասնավորապես Մոկաց տարրերակները, հարուստ էին երգային հատվածներով և երգվում էին ծանրաթախիծ մեղեդիով: Եվ ապա, շատ վիպասացների վկայությամբ՝ վեպի առավել կատարյալ, ամբողջական (յոթ կամ քառասուն ճյուղից բաղկացած լինելու) և անթերի իմացություն վերագրվում էր իրենց նախորդ վարպետներին: Այս և նման փաստերի հիման վրա Մ. Աբեղյանը հետագայում դալիս է այն իրավացի եզրակացություն, որ հնում եղել են վիպասանական դպրոցներ, իսկ «XIX դարի վերջում և XX դարում ասացողների վարպետները պատահական մարդիկ են եղել», որ «ասացողները վեպի շրջանն իրենցից առաջ են դնում» և որ այդ ժամանակաշրջանում «վեպն իրոք անկման ու խանդարման մեջ է»:⁴ Սա պատմական կարևոր հետևություն էր մեր վեպի կենցաղավարման ընթացքի և իրական վիճակի վերաբերյալ:

Սրվանձախանցն այնուհետև մի քանի թոռուցիկ դիտողություններ է անում իր գրառած պատմի վերաբերյալ, որոնք դարձյալ ունեցան ելակետային արժեք հետագայում մեր վեպի ուսումնասիրման համար:

Նախ՝ նա մի երկու ընդհանուր հատկանիշ է մատնանշում պատմի լեզվի նկատմամբ. «Պատմիչի լեզվին մեջ,—գրում է Սրվանձախանցը,— բաղիշեցվոց բառեր կան գործածված. պատճառն այն է, որ պատմիչի գեղը թեպետ Մշտ կպատկանի, բայց Բաղիշտ մոտակա է. ընդհանրապես խոյթա և Չուխուրա դեղերու հայտ լեզուն այս տիպն ունի»⁵: Ուրեմն, լեզուն հիմնականում Մշտ բարբառն է, բայց մասամբ խառնված Բաղիշի բարբառային տարրերով, որ բացատրվում է վիպասացի հայրենի Առնիսա գյուղի՝ Բաղիշին մոտ գտնվելու աշխարհագրական դիրքով: Սրանով փաստորեն ակնարկվում է ազգագրական տարածքային այն խումբը, որին պատկանում էր իր գրառած պատմը:

Սրվանձախանցն այնուհետև խոսում է վեպի նյութի և պատմական

⁴ Նույն տեղում, էջ 85:
⁵ Մ. Աբեղյան. Երկեր. հ. Ա, Երևան, 1966, էջ 480—481:
⁶ Ք. Սրվանձախանց. Երկեր, հ. I, էջ 85:

ատաղճի մասին, գտնում, որ պատմածին նյութը Արծրունյաց նախարարու-
թյուն և Սասնո գավառի շինություն ու սկզբնավորությունն է՞: Այգ առթիվ
նա մատնանշում է հնագույն և հայ միջնագարյան գրավոր աղբյուրների
տվյալները (Աստվածաշունչ, Մովսես Խորենացի, Թովմա Արծրունի) Ասո-
րեստանի Սենեքերիմ արքայի որդիներ Աղրամելիքի և Սանասարի հորն
սպանելու, Հայաստան փախչելու և այնտեղ ապաստանելու, Սանասարի՝
Սասունում, իսկ Աղրամելիքի՝ «Վանա ծովու կողմերը» բնակվելու մասին,
տվյալներ, որոնք, իրոք արտացոլում են գտել վեպում:

Սրվանձտյանցը հատկապես ուշադրություն է հրավիրում վեպում ար-
տացոլված պատմական անձանց ու իրադարձությունների անխորհրդմաների
վրա, հանգամանք, որ ժողովրդական վեպերի ժանրային յուրահատկություն-
ներից էր, բայց որը ինչ-որ շահով Սրվանձտյանցի տարակուսանքն է հա-
րուցում, «Կտեսնվին այս ասացվածքին մեջ այնպիսի կտորներ,—գրում է
նա,— որ պատմագրությանց կհամաձայնի. բայց կտորներ ալ կան,
որ բոլորովին ժամանակագրության, սեղագրության և ամեն հանգա-
մանց հակառակ են: Դեպքեր՝ որ հառաջ քան դժբախտսն են, քրիս-
տոնեաբար կըրուցվին, և Սանասարի ու Աղրամելիքի ժամանակը Մշո Ս. Կա-
րապետի վանքն ու հայերը խաչապաշտ կներկայացվին»⁷: Անկախ հեղինա-
կի տարակուսանքից, էականն այն է, որ նա միանգամայն ճիշտ էր նկատել
պատմական տարբեր դարաշրջանների իրողությունները միմյանց միախառ-
նելու և ժամանակագրական միասնական հարթության վրա դնելու վիպական
ոգու ու տրամաբանության տվյալ հատկանիշը:

Սրվանձտյանցն այնուհետև ուշադրություն է դարձնում վիպական տե-
ղանունների ու անձնանունների վրա, տեղանուններից շատերը համարում իս-
կապես նույնական իրական պատմական տեղանուններին: Միայն Մսըր
անվան մեջ է նա սխալվում, այն թեականորեն նույնացնելով նմանահունչ
Մոսուլին, որը հետագայում, առանց լրջորեն կշռադատելու, կրկնվեց նաև
որոշ հետազոտողների կողմից:

Վիպական անձնանուններից հատկապես ընդգծվում են Ճննդափոխիկ,
Ցուանվեզի և Խորգուսան անունները և երեքն էլ Սրվանձտյանցի միանգամայն
ճիշտ բնորոշմամբ, «բոլորովին բանաստեղծական անուն կթվին»:

Առանձնապես արժեքավոր են Սրվանձտյանցի դիտարկումները վեպի
գաղափարական բովանդակության, գեղջկական կենցաղային սովորությունների
արտացոլման և մանավանդ առասպելաբանաստեղծական լեզվի ու մտածո-
ղության մի քանի հատկանիշների վերաբերյալ: Դրանցում երևում է վեպի
գաղափարագեղարվեստական կողմերի գեղագիտական խոր ու նրբաձաշակ
ըմբռնում:

«Ամբողջ այս գրույցքը,—գրում է Սրվանձտյանցը,—նկարագիր է քա-
ջության, ընտանության, բարեպաշտության և պարզ ու անխորամանկ հարա-
բերության Դավիթին՝ յուր սիրուհիույն հետ, յուր ախոյանին հետ: Այս գր-
վածքը յուր բոլոր անկանոնությամբ հանդերձ՝ հիանալի ոճեր ունի ասաց-
վածքի: Դյուցազնի բազկի ուժը անհամեմատ ցույց տալու համար՝ երբ Դա-
վիթին խլել կուտա Ջորջիզի ձեռքն գուրզը, նետել կուտա այնպե՛ս ուժգին,
որ տակավին մինչև հայսօր կ'երթա՝ նետելուն թափեն, Դավիթի ուժո ան-
սահմանությունը և տիեզերաց անհունությունը ցուցնելով:

Այս գրվածքի մեջ կտեսնես հետաքրքիրն՝ գեղջկական կյանքի հանգա-
մանքները. Աբամելիքի մահվան համար սասունցվոց սուգը, Քեռի Թորոսի
ուխտը, «հացն ու դինի, տերն կենդանի» երդումն. հպատակեցրնելու համար
թուրի տակեն անցընելու սովորությունը, Դավիթի և յուր հորթարած ընկերին
մտերմությունը. Խանդուղ խանրմին աշուղ դրկելը՝ Դավիթը իրեն վրա սի-
րեցընելու. Դավիթի անվեհերություն և վեհանձնությունը, երբ Մսրամելիքի
հետ կզարնվին. Խանդուղի քաջությունը և փեհլիվաններուն ճիվաղական

7 նույն տեղում:
8 նույն տեղում:

նկարագրի ահագնությունը. Ձենով Օհանի ձայնի ուժն և ահավարությունը. և Մհերի գորությունը, որ իսպառ անհամեմատ մարդկանց կկայացանե, և երկրագունդն ալ զայն կրելու անբավական»⁹:

Այսպես, տեսնում ենք, որ վեպի իր գրառած տարբերակի առնչությամբ Մրվանձտյանցը սուկ հակիրճ ակնադրվածքով անգրագառնում է վեպի գրեթե լուրջ ալն էական խնդիրներին (վիպասանների և վեպի տիպը, լեզուն, պատմական հիմքն ու հիշատակները, աշխարհագրական անդամավորերը, գործող անձինք ու անունները, հիմնական բովանդակությունը, գեղջկական ազգային կենցաղի ու սովորույթների արտացոլումը, գեղարվեստական պատկերավորումը և այլն), որոնք հետագայում գարձան վեպը հետադոտող մասնագետների հիմնահարցերը: Այս հանգամանքը արդյունք էր վեպի էական հատկանիշների մեջ Մրվանձտյանցի դիտական ճիշտ կողմնորոշման: Իր այս թոռուցիկ նշմարներով Մրվանձտյանցը փաստորեն ուղղակիացում է մեր վիպագրության նախագծային հիմքը, որի վրա ապագայում պիտի մարմնավորվեր ու բարձրանար բուն վերնաշենքը: Եվ ոչ միայն այդ: Մրվանձտյանցը տեղադրական ու հնախոսական կարևոր տվյալներ է հաղորդում վեպում արտացոլված իրույթի՝ Վանի մոտ գտնվող Ազրփի քարի և նրա մեջ ածողի Մհերի դառն մասին, ուր, ըստ վիպական ավանդության, փակված է Մհերը: Այս կապակցությամբ նա հաղորդում է Մհերի մասին մի առասպել, որ վեպում արտացոլում չի գտել:

«Մհերի դրան վերեն սև ջուր մը կաթ կաթ կծորիս Եվ կրսեն. «Մհերն և յուր ձին Ասաուծո հրամանով փակվեր են այն տեղը: Այն սև ջուրը Մհերի ձիու շնուն է: Այդ դռնով ներսը նախորի Ֆայակ կդառնա, այսինքն աշխարհի մարդկանց կամ երկրագնդին ճախրը, անիվը, Մհերը շարունակ անոր վրա կնայի. ևրը այդ ճախրը դադարի, այն օր Մհեր կաղատի, դուրս կելլե ու աշխարհը կավրև» Եվ թե. «Ամեն տարի Համրարձման գիշերը երկինք գետին իրար կհամրուրեն. և այդ ըոպեին Մհերի դուռը կրացվի. ո՛վ որ արթուն մնացեր է այդ վայրկյանը տեսեր, ինչ որ սիրտն ուղեր, այնպես եղեր է: Եվ որովհետև Մհերի դուռը բաց է այն ըոպեին, ո՛վ որ ներս մտնե, որքան ոսկի ուղև կառնե, դուրս կելլե, վասնզի հոն աշխարհի ոսկին կուտված է: Թե՛ քանի մը մարդիկ փորձեր են և աղահ լինելով շատ վերցրնելու համար հուշացեր, դուռը դոցվեր, ներսը մնացեր են:

Ուրեմն, այս կերպով, — եզրակացնում է Մրվանձտյանցը, — Մհեր կլինի աշխարհի բախտը դարձնող ու ոսկի բաշխող շատված մը. գուցե Մհերն ինքն Միհր Մեծն լինի և յուր դուռը ուղղակի հարավո հանդեպ կամ արևու լինելով՝ պաշտելու պատշաճ: Բայց ներկա վեպը այլապես կպատմես¹⁰:

Բացի այն, որ այս առասպելն ինքնին շատ է արժեքավոր ու տիեզերագիտական, նույնքան արժեքավոր է Մրվանձտյանցի խորամիտ կռահումն այն մասին, որ Մհերն, ըստ առասպելի, հանդես է դալիս իբրև տիեզերքի բախտը տնօրինող աստվածություն, ինչպես նաև այն, որ թեպետ փոքր-ինչ թեանկան ու կասկածանքով՝ Մհերի կերպարի մեջ նա զգում է ու տեսնում Միհր կամ Միթրա աստծու անվան ու գործառույթի արտացոլանքը: Ավելին. նա, ելնելով Մհերի գուան հարավ նայող արևահայաց դիրքից, միանգամայն ճիշտ է կռահում այդ հուշարձանի երբեմնի պաշտամունքատեղի լինելը:

Հայագիտության մեջ հետագայում հիմնավոր կերպով ապացուցվեց, որ իսկապես վիպական Մեծ և Փոքր Մհերի կերպարներում արտացոլվել են հին Միհր—Միթրա աստվածության անունն ու գործառույթները, իսկ Ի. Դյակոնովի կողմից վերջերս առաջ քաշվեց մի ուշագրավ տեսակետ, ըստ որի Վանի քարայրի միջնամասի «Մհերի դուռ» անվանումը նույնական է ուրարտական արձանագրություններում հաճախակի հիշատակվող «Խալդիի դարպասներ» անվան հետ, կառուցված Իշպուլինիի և նրա որդի Մինուայի

⁹ Նույն տեղում, էջ 86:

¹⁰ Նույն տեղում, էջ 88:

կողմից, որ Մհերի դուռը հնում եղել է հալդի աստծու պաշտամունքատեղին և միայն հետագայում հայացվել ու համադրվել է Միհր աստծու անվանն ու պաշտամունքին¹¹։

Գալով Գ. Արվանձախեցի գրառած վեպի անդրանիկ պատումի որակին՝ պետք է նկատել, որ այն, թե՛ վիպասաց Կրպոյի խոստովանութեամբ և թե՛ հետագայում գրառված մի շարք նոր ու ամբողջական պատումների համեմատ, անշուշտ, այնքան էլ կատարյալ չէր, բայց օժտված էր վիպական կուռ ու կտրուկ ոճով, հակիրճ, խստորեն քանդակված պատկերավոր լեզվով ու բանաձևերով, դերժ ավելորդ մանրամասներից ու անհարկի շեղումներից, հատկանիշներ, որ ինչպես պարզվեց վեպի հետագա գրառումներից, բնորոշ էին առհասարակ Մշո տիպաբանական խմբի պատումներին, որի անդրանիկ նմուշն էր հենց Արվանձախեցի գրառած տարբերակը։ Ու թեպետ այնտեղ բացակայում է Մեծ Մհերի ճյուղը, բայց վերջինիս մի քանի դրվագներ (Մըսրում թագավոր նստելը, Մսրա տիկնոջից ապօրինի զավակ ունենալը, Մսրամելիքի հետ պայման կնքելը ևն) առկա են և վերագրված Աբամելիքին։ Այնպես որ այս պատումը հիմնականում արտացոլում է վեպի սյուժետային ավանդական ուղիվազժի ամբողջութունը, և ցարդ մնում է նրա լավագույն պատումներից մեկը։

Արվանձախեցն, անշուշտ, գիտակցում էր իր կատարած գործի արժեքը, զգում իր հայտնաբերած հերոսավեպի պատմամշակութային խորքն ու իմաստը, բայց թերահավատ էր դրա հասարակական ընդունելության նկատմամբ։ Նա վեպի պատումի առաջաբանում գրում էր. «Այս գործիս հրատարակությունը հասկացողին համար արժեք կունենա. բայց կարծեմ արհամարհողներ ավելի պիտի լինին և այսանողներ... Աստուք չհասկացողներն են։ Բայց մեր փուլը չէ։ Քաջալերված կհամարիմ զիս, եթե համրանքով քսան հոգի ևեթ լինին հավանող այս դործույն»¹²։

Արվանձախեցի կասկածն իզուր էր. նրա գործի արժեքը չհասկացողներ չգտնվեցին. ընդհակառակը, հասկացողներն ու գնահատողներն այնքան շատ էին և այնքան լուրջ մտավորականներ (Ալիշան, Բաֆֆի, Գաբրիել և Քերովբե Պատկանյաններ, Ս. Մանդինյան, Գր. Խալաթյանց և այլք), որոնց կարծիքն ուներ համազգային հեղինակություն։ Տպվում են հիացական գրախոսականներ, գրվում են անձնական նամակներ, գտնվում են Արվանձախեցի նախածեղծությունը նյութապես հովանավորող ազգային բարերարներ (Մարկոս Աղաբեկյան, Հովսեփ Իզմիրյան)։ Պրոֆ. Ք. Պատկանյանը Արվանձախեցի գրառած պատումն անմիջապես զետեղում է իր «Նյութեր հայերեն բարբառների ուսումնասիրության» գրքում (1875 թ.) իբրև բարբառագիտական հուշարձան։

Ս. Մանդինյանը այն փոխադրում է գրական լեզվի և 1880 թ. հրատարակում «Ազգային դիցազնական աշխարհ» ուսումնական ձեռնարկում, որը հետագայում ունենում է մի քանի հրատարակություն։ Գր. Խալաթյանցը այն թարգմանում է ռուսերեն և 1881-ին առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակում։ Նույն թվականին այդ պատումի գերմաներեն թարգմանությունը հրատարակվում է կայացրիցում՝ Արթուր Լայստի «Armenisch Bibliothek» ժողովածուի 4-րդ պրակում։ Այսպես, կարճ ժամանակամիջոցում Արվանձախեցի հայտնաբերած հերոսավեպը բավական լայն տարածում և ընդունելություն է գտնում թե՛ հայ և թե՛ այլալեզու գրական-հասարակական միջավայրերում։ Պատճառն, անշուշտ, ամենից առաջ մեր հերոսավեպի բուն ազգային բնույթի և նրա համամարդկային խորքի մեջ էր։ Եվ ոչ միայն այդ. հայ կյանքը XIX դարի վերջին քառորդում ապրում էր ազգային ինքնագիտակցության արթնացման իր խոր ու լայնահուն վերընթացը, ազգային արժեքների ինքնագնահատման մի այնպիսի ժամանակաշրջ-

¹¹ И. М. Дьяконов. К вопросу о символе Халди.—Древний Восток 4, Ереван, 1983, с. 191—192.

¹² Գ. Արվանձախեց. Երկեր. հ. 1, էջ 86.

ջան, երբ ազգային դյուցադնավիպի հայտնագործումը կարող էր միայն խմորումների և նոր վերելքների ազգակ ծառայել: Ռացի այդ, ժամանակի թե՛ հայ և թե՛, մանավանդ, օտար մտավորականների մեջ արմատացել էր այն հոռի կարծիքը, թե հայ ազգը դարեր շարունակ դրկված լինելով անկախ պետականությունից, ենթակա՝ օտարների լեզվին ու մշակույթին, վաղուց ի վեր դրկվել է սեփական լեզվով ու ազգային նկարագրով հերոսափան վիսպասանություն ունենալու հնարավորությունից: «Սասնա ծռերի» դյուար դայիս կր առմիշտ հերքելու այդ կարծրացած անսակետը:

Ահա այս պարագաները նկատի առնելով՝ միանգամայն պարզ ու հասկանալի է դառնում ողորդության այն բուռն տիրքը, որ առաջ բերեց Սրվանձրայանցի հայտնագործությունը հայ ժողովրդի բոլոր հասվածներում, թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում միաժամանակ:

Հասարակական այս անսպասելի ջերմ ու հուզիչ ընդունելությունից սուաջին ողեղնչվողը հղումը Սյուսանձայանցն ինքը, որն սկսում է իրար հետեւից լույս աշխարհ հանել արեւատահայ տարրեր դավառներից իր իսկ հավաքած բանահյուսական ու սոցիալական դոգմայիկ նմուշների ընտրանին՝ «Մանանան», «Համով-հոտովը», «Թորոս աղբարը»՝ մեկը մյուսից ճաշակով, ազնիվ ու դունազեղ:

Սրվանձայանցի դործի սուաջ բերած բուռն ողեսրությունը փոխարկվում է դործնական մի մեծ շարժման. նրա նմանությունը ու հեանությունը արեւելահայ ու արեւտահայ հասվածներում, մտավորականության տարրեր ներկայացուցիչների կողմից սկսվում են բանահյուսական և ազգագրական նյութերի զանդվածային դրառումներ և հրապարակումներ: Մեկը մյուսին հաջորդում են բանահավաքների նոր անուններ, ժողովրդագիտական արժեքների նորանոր ժողովածուներ:

Գորեգին Սրվանձայանցն, այսպիսով, «Սասնա ծռեր» հերոսավեպի հայտնաբերումով և դրան հաջորդած նոր ժողովածուների հրատարակությամբ փաստորեն դառնում է հայ ժողովրդագիտության մեծ շարժման հիմնադիրն ու առաջամարտիկը:

Ահա թե ինչ պատմական նշանակություն ունեցավ մեր ազգային վեպի հայտնագործումը և թե ինչու 1874 թ. հայ ժողովրդական մշակույթի պատմության մեջ դառնում է խորհրդանշական ու շրջադարձային:

Եվ այսօր, մեր ազգային համատարած զարթոնքի, ազգային բուռն շարժումների ու նոր ձեռքբերումների այս հորձանուտից, որ շատ է նման Սրվանձայանցի ապրած ժամանակաշրջանին, հետագարձ հայացք գցելով հայ ժողովրդագիտության անցած ավելի քան հարյուրամյա ընթացքին ու արդյունքներին, շենք կարող դուրս շխոնարհել այդ դործն սկզբնավորող Մեծ երախտավորի հիշատակի առջև, միաժամանակ շմտրել, թե դեռ ինչքան անելիքներ կան ծառացած մեր և արդեն մեղ փոխարինող մասնագետ սերունդների առջև. իսկ այդ խնդիրների բարեխիղճ գիտական իրադործումը իսկապես կդառնա լավագույն հատուցումը Մեծն Սրվանձայանցի լուսն հիշատակի:

ГАРЕГИН СРВАНДЗТЯНЦ И АРМЯНСКИЙ ГЕРОИЧЕСКИЙ ЭПОС

(К 150-летию со дня рождения Г. Срвандзтянца)

Доктор филол. наук С. Б. АРУТЮНЯН

Резюме

Гарегин епископ Срвандзтянц (1840—1892)—выдающийся представитель армянской фольклористики, записал в 1873 г. в Западной Армении со слов жителя с. Арнист Мушского вилайета Крпо (=Қарапет) первый вариант армянского героического эпоса : «Сасна црер» («Давид Сасунский»), который опубликовал в 1874 г. в Константинополе («Гроц и броц и Давид Сасунский или Дверь Мгера»). В предисловии Г. Срвандзтянц вкратце затронул почти все основные проблемы эпоса, которые в дальнейшем стали основополагающими для армянских исследователей. 1874 г. стал вехой в истории армянской фольклористики, ибо вновь открытый эпос, вызвав в армянском обществе восхищение и интерес к народному творчеству вообще, явился стимулом к собиранию и публикации произведений народно-поэтического творчества.